ՀՀ Կառավարության աոընթեր | ՀՎՀՀ՝ | 70976695 | **Սուրեն Սարիբեկի Սարդարյան**

Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչություն | ՀԾՀ՝ | 1309630380

անուն, ազգանուն, հայրանուն

Տավուշի մարզ, Իջևան, Մեսրոպ Մաշտոցի 1 նրբ., 6 փակ. 8

հաշվառման /բնակության/ հասցե

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների՝ Ձեր կողմից 30.07.2018թ. ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք է ներմուծվել ՀՀ կառավարության 30.07.2015թ. թիվ 865-Ն որոշմամբ սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակը գերազանցող, շրջակա միջավայրին վնաս պատճառող և 5 տարուց ավելի մինչև 10 տարի, ներառյալ՝ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող տրանսպորտային միջոց:

Համաձայն <<Մաքսային կարգավորման մասին>> ՀՀ օրենքի 249 հոդվածի 6-րդ մասի՝ վերոնշյալ գործարքը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում. համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ մասի՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծման գործարքի դեպքում պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները:

Օրենսգրքի 179 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար բնապահպանական հարկի գումարը ներմուծող հարկ վճարողները հաշվարկում են ինքնուրույն և հաշվարկված բնապահպանական հարկի գումարը ներառում են Օրենսգրքով սահմանված կարգով ու ժամկետներում հարկային մարմին ներկայացվող ներմուծման հարկային հայտարարագրում:

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից 23.06.2021թ. կազմված թիվ 32292/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության՝ Ձեր կողմից չկատարած հարկային պարտավորությունը 23.06.2021թ. դրությամբ կազմել է 101.061 դրամ, որից հարկ՝ 67.144 դրամ, տույժ՝ 33.917 դրամ:

Տեղեկացնում ենք, որ համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքի առթիվ, ի կատարումն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների՝ առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11-ին ներկայանալ վարչական վարույթի նախնական լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և/կամ առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87 ա: Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժնի առաջատար մասնագետ՝
հեռ.՝ 011-54-91-91/91-68/

Digitally signed by ՋԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԼԱՐԻՍԱ
JAGHATSPANYAN

30/Հլս/2021